



Saints Joachim & Anne Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor
Rev. Fr. DIRAN PAPA ZIAN, Archpriest
Տ. ՏԻՐԱՆ ԱՌ. ՔԶՆՅ. ՓԱՓԱՔԵԱՆ, ՀՈՎԻԼ

8 Մայիս, 93

Գեր. Տ. Խաժակ Արք. Պարսամբան,
Առաջնորդ,
ի նիւ Եորք, Ն.Ն.

Սիրելի Արքեպիսկոպոս,

ինչպէս յայտնի է Արքեպիսկոպոսին, յառաջիկայ Ապրիլ 18-ին հանդերձեալ է կատարուիլ Փալոս Հայթցի Ս. Յովակիմ եի Աննա Հայց. Առաքելական Եկեղեցւոյ նորաշէն մարմարապատ խորաններուն եւ նոր իւղաներկ նկարներու օժման արարողութիւնները ձեր հանդիսակատարութեամբ:

Վերոյիշեալ զոյգ արարողութեանց վերաբերմամբ՝ փափաքելի պիտի ըլլար յատուկ պատրաստուած Կարգացոյց մը ունենալ ի ձեռինն՝ որու վրայէն կարելի ըլլար հետեւիլ արարողութեանց առանց ասդին անդին փնտոելու զանոնք: Վարդ Նաւակատեաց Եկեղեցւոյ՝ գիրքը կրնայ ուղղեցոյց ծառայել, սակայն չի կրնար նպատակին ծառայել քանի որ դասաւորեալ կարգացոյց մը չէ մեր կատարելիք արարողութեանց: Յիշեմ որ երեք խորաններ կան, Մայր խորանը եւ աջակողմեան եւ ձախակողմեան խորանները, երեք իւղաներկ նկարներով, Ատուածածնայ նկարը Յիսուս մանուկը գրկին որ աւանդական նկարն է Սայր խորանին, աջակողմեան խորանին համար պատրաստուած նկարը՝ Ս. Յովակիմ եւ Աննայի Մարիամ մանկիկով միասին եւ ձախակողմեան խորանին համար պատրաստուած նկարը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ պաշտպան սուրբը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ:

Օգտակար պիտի ըլլայ նաեւ յիշեցում մը ընել մեզի՝ այն բոլոր առարկաներուն վերաբերմամբ որոնք անհրաժեշտ պիտի ըլլան օժման արարողութեան համար, որպէս զի խուսափինք վերջին վայրկեանի փնտոտուքներէ զանոնք հայթայթելու համար:

Ժխական Խորհուրդի կարգադրութեան համաձայն արարողութիւնները պէտք է սկսիլ ժամը 9.30-ին որպէս զի ոչ աւելի ուշ քան ժամը 12.30-ին արարողութիւնները վերջանան որովհետեւ ճաշկերոյթը մերձակայ ճաշարանի մը մէջ տեղի պիտի ունենայ ժամը 1.00-ին ուր կրնանք մնալ միայն մինչեւ ժամը 4.30 եւ 4.30-ին պէտք է պարպած ըլլանք ճաշարանին սրահը: Յուսամ այս ժամանակացոյցին վերաբերմամբ մասնաւոր առարկութիւն մը չունիք եւ թէ մենք կրնանք մեր գործերը ի կատար ածել տուեալ ժամանակամիջոցին մէջ:

Հարունակութեանը յաջորդ էջ...

Սիրելի Սրբազան, Այս առիթով կ'ուզեմ խոնարհաբար ձեր ուշադրութեան քերել պարագայ մը որով կարելորդութիւնը չենք կոնար ստորագնահատել: Ձեզի ծանօթ է որ այս քոլորը կարելի եղած է շնորհիւ առատաձեռն նուիրատուութեանը մեր բարեպաշտօն ծխականներէն՝ Տիար Կրէկ Սրապեանի: Պրն. Սրապեանի տարիներու երազն էր օժտել եկեղեցիս նորաշէն մարմարապատ խորանով եւ նոր իւղաներկ նկարներով. եւ այս ուղղութեամբ անհկա միս-մինակը յամառ հետեւողականութեամբ մը իր ճիգերը լարեց անվհատ եւ աննահանջ ոգիով, մինչեւ որ յաջողեցաւ իր երազը իրականութեան վերածել:

Պատշաճ պիտի ըլլար ուրեմն որ Պրն. Սրապեանի բարերարութիւնը նկատի առնուէր եւ արդարօրէն վարձատրուէր թեմակալ Առաջնորդին կողմէ, թեմական մակարդակի վրայ, Ս. Վարդանի շքանշանով մը պատուելով զինքը:

Պրն. Սրապեան եկեղեցւոյս օգտանուէր եւ հաւատարիմ անդամներէն մին է, անհկա սկիզբէն ի վեր առատաձեռն եղած է իր նուիրատուութեան մէջ հակառակ որ մեծահարուստ մը չէ: Ծնած է Ռուսահա բարեպաշտ ընտանիքի մէջ. եղած է վեհափառին աշակերտ այս վերջնոյն Ռուսահայ Առաջնորդութեան շրջանին: Ծառայած է ծխական խորհուրդի վրայ Ուէսթ Փուլմանի օրերէն սկսեալ, մինչեւ իսկ պատճառ ըլլալով որ Ուէսթ Փուլմանի մէջ նոր եկեղեցի մը շինուի նախկինին վայրին վրայ, 60-ական թուականներուն: Տարիներով վարած է դպրապետութեան պաշտօնը եւ վերջերս ալ Կիրակնօրեայ դպրոցի մանուկները կը մարզէ իբրեւ Կրտսերներու դպրաց դաս: Ես վստահ եմ որ Պրն. Սրապեանի համար Ապրիլ 18-ի օրը կրկնապէս նշանակալից օր մը պիտի ըլլայ եթէ ինքը պատուուի Առաջնորդարանի Ս. Վարդան շքանշանով, պատշաճ Օրհնութեան Գիրով մը:

Իբրեւ Հովիւ ուրեմն, ես խոնարհաբար կը քերեմ սոյն խնդրանքը Ձերդ Սրբազնութեան նկատուման սոյն շնորհաբաշխութեան համար եւ վստահ եմ որ ծխական խորհուրդն ալ միահամուռ համակարծիք պիտի ըլլայ որեւէ տեսակի Առաջնորդական զնահատման: Պրն. Սրապեանի Կենսագրականը հաճեցէք զտնել ներփակ:

Հուսկ ապա, լրացնելէ առաջ սոյն նամակը կ'ուզեմ աւելցնել նաեւ հետեւեալը: Ծաքաթ իրիկուն, Ապրիլ 17-ին, այսինքն խորաններու եւ սրբապատկերներու օժման նախընթօրը, Պրն. Սրապեան կը փափաքի ձեզ ճաշի հրաւիրել մերձակայ ճաշարան մը, իր հեռուներէն ժամանող քառասնեակ մը ազգականներուն հետ միասին, որով նաեւ ծխական խորհուրդի անդամները եւս հրաւիրուած են եւ ծխական խորհուրդը ընդունած է այս կարգադրութիւնը:

Մնամ խոնարհաբար
Աղօթակից *Մկր. Մկրտումն Կրէկ*
Տ. Տիրան ԱԼ. Բնյ. Փափազեա ն